ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԴԱՄՅԱՆ, ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԵՎ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-22/1

ք. Սիսիան «23» 09 2022թ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքը, ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Հակոբջանյանի, որը գործում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ադամյան, Իսրայելյան և Պարույր Սևակի փողոցների կապիտալ վերանորոգման

Աշխատանքների անվանումը

աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 180 օրացույցային օրվա ընթացքում::

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված հաշված 1095 օրացուցային օր: Եթե երաշխիքային

ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[28]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

[28] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 487221780 (չորս հարյուր ութսունյոթ միլիոն երկու հարյուր քսանմեկ հազար յոթ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որից 81203630 (ութսունմեկ միլիոն երկու հարյուր երեք հազար վեց հարյուր երեսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[30.1]:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

[30.1] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

---

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[33]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[34]

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է

---

[33] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

[34] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[35]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Սիսիանի համայնք	<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ
ք. Սիսիան, Սիսական 31	ք. Սիսիան, Շիրվանզադե 5
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.	Բանկ <Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 900292101285	Հ/Հ 1150008211381335
ՀՎՀՀ 09215978	ՀՎՀՀ 09804085
Համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Հակոբջանյան	Տնօրեն Վ. Վարդանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[35] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված թիվ 1
«23» 09 2022թ. կնքված
ՍՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ԱԴԱՄՅԱՆ, ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԵՎ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվները կցվում է պայմանագրին:

* Կապալառուն աշխատանքները կատարում է

Չափաբաժին 1 – ՀՀ Սյունիքի մարզի, ք. Սիսիան Ադամայն փողոց,
ՀՀ Սյունիքի մարզի, ք. Սիսիան Իսրայելյան փողոց,
ՀՀ Սյունիքի մարզի, ք. Սիսիան Պարույր Սևակ փողոց:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101285
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար _____ **Ա. Հակոբջանյան**
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ
ք. Սիսիան, Շիրվանզադե 5
Բանկ <Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150008211381335
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն _____ **Վ. Վարդանյան**
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«23» 09 2022թ. կնքված
ՍՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱԴԱՄՅԱՆ, ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԵՎ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Մայթերի քանդման և հողային աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 21 օրացույցային օրվա ընթացքում
2	Եզրաքարերի տեղադրում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 21 օրացույցային օրվա ընթացքում
3	Ջրահեռացման առուների տեղադրում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 28 օրացույցային օրվա ընթացքում
4	Մայթերի ասֆալտապատում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 28 օրացույցային օրվա ընթացքում
5	Երթևեկելի մասի հիմքի կառուցում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 42 օրացույցային օրվա ընթացքում
6	Երթևեկելի մասի ասֆալտբետոնի ծածկույթի տեղադրում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 42 օրացույցային օրվա ընթացքում
7	Իջատեղերի ասֆալտբետոնի ծածկույթի տեղադրում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 28 օրացույցային օրվա ընթացքում

ԸՆԴԱՄԵՆԸ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 180 օրացույցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101285
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար _____ **Ա. Հակոբջանյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ
ք. Սիսիան, Շիրվանզադե 5
Բանկ <Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150008211381335
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն _____ **Վ. Վարդանյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
«23» 09 2022թ. կնքված
ՍՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231162	*Ադամյան, Իսրայելյան և Պարույր Սևակի փողոցների կապիտալ վերանորոգման աշխատանքներ*	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:* ***Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:***

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101285
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար _____ **Ա. Հակոբջանյան**
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ
ք. Սիսիան, Շիրվանզադե 5
Բանկ <Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150008211381335
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն _____ **Վ. Վարդանյան**
(ստորագրություն)
Կ.Տ

Սիսիան համայնքի Ադամյան, Իսրայելյան և Պարույր Սևակի փողոցների կապիտալ վերանորոգում

Ծավալաթերթ նախահաշիվ

հ/հ	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Միավորի արժեք	Գումար հազ. դրամ	Կշիռը՝ ըստ հրավերի %	Կշիռը՝ ըստ մասնակցի %
1	2	3	4		6	7	8
	Ադամյան փողոցի կապիտալ վերանորոգում						
	Հողային աշխատանքներ քանդման աշխատանքներ						
1	Ճանապարհի գրունտի մշակում 0,65մ3 տարողությամբ էքսկավատորով, բեռնելով ավտոհինքնաթափ IV կարգ	1000մ3	0,3001	924,90	277,56		
2	Ճանապարհի գրունտի մշակում բուլդոզերով մինչև 50 մ տեղափոխումով	1000մ3	0,0235	365,92	8,60		
3	Եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքով և բարձում ավտոհինքնաթափ	100մ	2,21	94,37	208,56		
4	Գրունտի հարթեցում լցակույտում	1000մ3	0,310045	46,38	14,38		
5	Շին աղբի և գրունտի տեղափոխում 7 կմ լցակույտ	տն	558,081	2,19	1219,62		
	Ընդամենը			0,00	**1728,72**	**0,43%**	**0,43%**
	Ջրահեռացման Ե/Բ վաքերի և անցումային խողովակների տեղադրում			0,00			
1	Ավազային նախապատրաստական շերտ 10սմ	մ3	7,56	4,95	37,43		
2	Հավաքվի Ե/Բետոնե 500*600*3000, 0,53 մ3 վաքերի տեղադրում/ կափարիչով	մ3	22,26	30,94	688,78		
3	Հավաքովի Ե/Բետոնե 500*600*3000, 0,53 մ3/կափարիչով	հատ	42	74,87	3144,51		
4	Ե/Բ վաքերի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	100 մ2	2,016	90,67	182,79		
5	Անցումային պողպատե խողովակի տեղադրում d= 273*5,0մմ	գ.մ	53,2	26,28	1398,24		
6	Խողովակների հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	100 մ2	0,456041	90,67	41,35		
	Ընդամենը			0,00	**5493,10**	**1,35%**	**1,35%**
	Մայթերի կառուցում			0,00			
1	Եզրաքարերի հիմքի Խճային նախաշերտի կառուցում 10 սմ հաստությամբ	մ3	12,525	8,87	111,12		
2	Նոր 150*300 Բազալտե եզրաքարերի տեղադրում Բ12,5 դասի բետոնյա հիմքի վրա	100մ	2,735	1128,09	3085,32		
3	Նոր 100*200 Բազալտե եզրաշարերի տեղադրում Բ12,5 դասի բետոնյա հիմքի վրա	100մ	1,44	651,23	937,77		
4	Մայթի ավազախճային (C-6) խառնուրդով հիմքի կառուցում 10 սմ հաստությամբ	100մ2	4,996	104,25	520,81		
5	Մայթի ծածկի շերտի իրականացում մանրահատիկ Դ տիպի ասֆալտբետոնե խառնուրդից 4 սմ հաստությամբ	100մ2	4,996	380,26	1899,80		
	Ընդամենը			0,00	**6554,82**	**1,61%**	**1,61%**
	Վաքերի և խողովակների միացման հանգույցների և գլխամասերի կառուցում			0,00			
1	Վաքերի և խողովակների միացման հանգույցների և գլխամասերի կառուցում հիդրոմեկուսիչ f-150,W4, B-15 բետոնով	մ3	0,2	80,18	16,04		
	Ընդամենը			0,00	**16,04**	**0,004%**	**0,004%**
	Երթևեկելի մասի կառուցում			0,00			
1	Խճային հիմքի կառուցում 12 սմ հաստութ.	100մ2	19,563	156,40	3059,73		
2	Բիտումի տարածում խճային հիմքի վրա 4,12կգ/ 1քմ	տն	8,059956	389,19	3136,89		
3	Ծածկի շերտի իրականացում 5 սմ հաստութ.մանրահատիկ "Բ" տիպի ա/բ խարնուրդից	100մ2	19,563	465,83	9113,00		
4	Առկա դիտահորերի թուջե մտոցով ե/բետոնյա հավաքովի կափարիչների ուղղում	հատ	4	5,31	21,26		
	Ընդամենը			0,00	**15330,87**	**3,78%**	**3,78%**
	Իջատեղերի կառուցում			0,00			
1	Խճային հիմքի կառուցում 12 սմ հաստութ.	100մ2	6,1395	156,40	960,24		
2	Բիտումի տարածում խճային հիմքի վրա 4,12կգ/ 1քմ	տն	2,529474	389,45	985,10		
3	Ծածկի շերտի իրականացում 5 սմ հաստութ.մանրահատիկ "Բ" տիպի ա/բ խարնուրդից	100մ2	6,1395	465,87	2860,22		
	Ընդամենը			0,00	**4805,56**	**1,18%**	**1,18%**
	Իսրայելյան փողոցի կապիտալ վերանորոգում			0,00			
	Հողային աշխատանքներ քանդման աշխատանքներ			0,00			
1	Ճանապարհի գրունտի մշակում 0,65մ3 տարողությամբ էքսկավատորով, բեռնելով ավտոհինքնաթափ IV կարգ/ ներառյալ կողային առվի կառուցում 0,6 մ խորությամբ	1000մ3	3,6077	924,97	3337,01		
2	Ճանապարհի գրունտի մշակում բուլդոզերով մինչև 50 մ տեղափոխումով	1000մ3	0,0205	365,93	7,50		
3	Եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքով և բարձում ավտոհինքնաթափ	100մ	12,11	94,38	1142,92		
4	Գրունտի հարթեցում լցակույտում	1000մ3	3,660665	46,38	169,78		

5	Շին աղբի և գրունտի տեղափոխում 7 կմ լցակույտ	տն	6589,197	2,19	14447,77		
	Ընդամենը			0,00	**19104,98**	**4,71%**	**4,71%**
	Ջրահեռացման Ե/Բ վաքերի և անցումային խողովակների տեղադրում			0,00			
1	Ավազային նախապատրաստական շերտ 10սմ	մ3	37,38	4,95	185,09		
2	Հավաքովի Ե/Բետոնե 500*600*3000, 0,53 մ3 վաքերի տեղադրում/ կափարիչով	մ3	110,24	30,94	3410,45		
3	Հավաքովի Ե/Բետոնե 500*600*3000, 0,53 մ3/կափարիչով	հատ	208	74,87	15572,83		
4	Ե/Բ վաքերի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	100 մ2	9,968	90,67	903,78		
5	Անցումային պողպատե խողովակի տեղադրում d= 273*5,0մմ	գ.մ	180,1	26,28	4733,51		
6	Խողովակների հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	100 մ2	1,5438532	90,67	139,98		
	Ընդամենը			0,00	**24945,65**	**6,14%**	**6,14%**
	Մայթերի կառուցում			0,00			
1	Եզրաքարերի հիմքի խճային նախաշերտի կառուցում 10 սմ հաստությամբ	մ3	71,844	8,87	637,42		
2	Նոր 150*300 Բազալտե եզրաքարերի տեղադրում Բ12,5 դասի բետոնյա հիմքի վրա	100մ	17,548	1128,09	19795,67		
3	Նոր 100*200 Բազալտե եզրաշարերի տեղադրում Բ12,5 դասի բետոնյա հիմքի վրա	100մ	6,4	651,23	4167,87		
4	Մայթի ավազախճային (C-6) խառնուրդով հիմքի կառուցում 10 սմ հաստությամբ	100մ2	33,26	104,25	3467,19		
5	Մայթի ծածկի շերտի իրականացում մանրահատիկ Դ տիպի ասֆալտբետոնե խառնուրդից 4 սմ հաստությամբ	100մ2	33,26	380,26	12647,59		
6	խամքարաբետոնից հենապատերի նորոգում	մ3	10,8	46,90	506,47		
	Ընդամենը			0,00	**41222,20**	**10,15%**	**10,15%**
	Անցումային d=530*6 խողովակների տեղադրում			0,00			
1	Անցումային պողպատե խողովակների ապամոնտաժում և հանձնում պատվիրատուին	100գմ	0,36	128,19	46,15		
2	Անցումային պողպատե խողովակի տեղադրում d= 530*6,0մմ	գ.մ	104	59,88	6227,17		
3	Խողովակների հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	100 մ2	1,730768	90,67	156,93		
	Ընդամենը			0,00	**6430,24**	**1,58%**	**1,58%**
	Վաքերի և խողովակների միացման հանգույցների և գլխամասերի կառուցում			0,00			
1	Վաքերի և խողովակների միացման հանգույցների և գլխամասերի կառուցում հիդրոմեկուսիչ f-150,W4, B-15 բետոնով	մ3	3,54	80,18	283,85		
	Ընդամենը			0,00	**283,85**	**0,07%**	**0,07%**
	Երթևեկելի մասի կառուցում			0,00			
1	Խճավազային հիմքի կառուցում 15 սմ հաստութ. C-5 խառնուրդով	100մ2	164,822	145,03	23903,60		
2	Ծածկի շերտի իրականացում 6 սմ հաստութ.խոշորահատիկ "Բ" տիպի ա/բ խարնուրդից	100մ2	164,822	534,68	88126,80		
3	Ծածկի շերտի իրականացում 4 սմ հաստութ. մանրահատիկ "Բ" տիպի ա/բ խարնուրդից	100մ2	164,82	377,32	62191,25		
	Առկա դիտահորերի թուջե մտոցով ե/բետոնյա հավաքովի կափարիչների ուղղում	հատ	3	5,31	15,94		
5	Դիտահորի թուջե կափարիչ՝ մտոց	լրակազմ	2	110,58	221,15		
	Ընդամենը			0,00	**174458,75**	**42,97%**	**42,97%**
2	**Իջատեղերի կառուցում**			0,00			
1	Խճավազային հիմքի կառուցում 15 սմ հաստութ. C-5 խառնուրդով	100մ2	9,5973	145,03	1391,87		
2	Ծածկի շերտի իրականացում 6 սմ հաստութ.խոշորահատիկ "Բ" տիպի ա/բ խարնուրդից	100մ2	9,5973	534,68	5131,47		
3	Ծածկի շերտի իրականացում 4 սմ հաստութ. մանրահատիկ "Բ" տիպի ա/բ խարնուրդից	100մ2	9,5973	377,32	3621,29		
	Ընդամենը			0,00	**10144,63**	**2,50%**	**2,50%**
	Պարույր Սևակի փողոցի կապիտալ վերանորոգում			0,00			
	Հողային աշխատանքներ քանդման աշխատանքներ			0,00			
1	Ճանապարհի գրունտի մշակում 0,65մ3 տարողությամբ էքսկավատորով, բեռնելով ավտոհինքնաթափ IV կարգ	1000մ3	0,6675	924,97	617,42		
2	Ճանապարհի գրունտի մշակում բուլդոզերով մինչև 50 մ տեղափոխումով	1000մ3	0,0294	365,93	10,76		
3	Եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքով և բարձում ավտոհինքնաթափ	100մ	9,435	94,38	890,46		
4	Գրունտի հարթեցում լցակույտում	1000մ3	0,70995	46,39	32,93		
5	Շին աղբի և գրունտի տեղափոխում 7 կմ լցակույտ	տն	1277,91	2,19	2802,00		
	Ընդամենը			0,00	**4353,57**	**1,07%**	**1,07%**
	Ջրահեռացման Ե/Բ վաքերի և անցումային խողովակների տեղադրում			0,00			
1	Ավազային նախապատրաստական շերտ 10սմ	մ3	23,34	4,95	115,57		

2	Հավաքովի Ե/Բետոնե 500*600*3000, 0,53 մ3 վաքերի տեղադրում/ կափարիչով	մ3	68,90	30,94	2131,53		
3	Հավաքովի Ե/Բետոնե 500*600*3000, 0,53 մ3/կափարիչով	հատ	130,00	74,86	9732,08		
4	Ե/Բ վաքերի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	100 մ2	6,22	90,67	564,32		
5	Անցումային պողպատե խողովակի տեղադրում d= 273*5,0մմ	գ.մ	163,50	26,28	4297,22		
6	Խողովակների հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	100 մ2	1,40	90,67	127,08		
	Ընդամենը			0,00	**16967,80**	**4,18%**	**4,18%**
	Մայթերի կառուցում			0,00			
1	Եզրաքարերի հիմքի խճային նախաշերտի կառուցում 10 սմ հաստությամբ	մ3	51,49	8,87	456,82		
2	Նոր 150*300 Բազալտե եզրաքարերի տեղադրում Բ12,5 դասի բետոնյա հիմքի վրա	100մ	8,18	1128,09	9225,49		
3	Նոր 100*200 Բազալտե եզրաշարերի տեղադրում Բ12,5 դասի բետոնյա հիմքի վրա	100մ	8,985	651,23	5851,30		
4	Մայթի ավազախճային (C-6) խառնուրդով հիմքի կառուցում 10 սմ հաստությամբ	100մ2	20,19	104,25	2104,71		
5	Մայթի ծածկի շերտի իրականացում մանրահատիկ Դ տիպի ասֆալտբետոնե խառնուրդից 4 սմ հաստությամբ	100մ2	20,19	380,26	7677,53		
6	խամքարաբետոնից հենապատերի կառուցում	մ3	9,52	46,90	446,44		
	Ընդամենը			0,00	**25762,30**	**6,34%**	**6,34%**
	Վաքերի և խողովակների միացման հանգույցների և գլխամասերի կառուցում			0,00			
1	Վաքերի և խողովակների միացման հանգույցների և գլխամասերի կառուցում հիդրոմեկուսիչ f-150,W4, B-15 բետոնով	մ3	0,68	80,18	54,53		
	[illegible]ամենը			0,00	**54,53**	**0,01%**	**0,01%**
	[illegible]թևեկելի մասի կառուցում			0,00			
1	Խճային հիմքի կառուցում 12 սմ հաստութ.	100մ2	39,27	156,40	6141,67		
2	Բիտումի տարածում խճային հիմքի վրա 4,12կգ/ 1քմ	տն	16,18	389,19	6296,55		
3	Ծածկի շերտի իրականացում 5 սմ հաստութ.մանրահատիկ "Բ" տիպի ա/բ խարնուրդից	100մ2	39,268	465,87	18293,85		
4	Առկա դիտահորերի թուջե մտոցով ե/բետոնյա հավաքովի կափարիչների ուղղում	հատ	5	5,31	26,57		
	Ընդամենը			0,00	**30758,64**	**7,58%**	**7,58%**
	Իջատեղերի կառուցում			0,00			
1	Խճային հիմքի կառուցում 12 սմ հաստութ.	100մ2	22,4909	156,40	3517,66		
2	Բիտումի տարածում խճային հիմքի վրա 4,12կգ/ 1քմ	տն	9,27	389,19	3606,37		
3	Ծածկի շերտի իրականացում 5 սմ հաստութ.մանրահատիկ "Բ" տիպի ա/բ խարնուրդից	100մ2	22,4909	465,87	10477,87		
	Ընդամենը				**17601,911**	**4,34%**	**4,34%**

Ընդհանուրը **406018,150** **100,00%** **100,00%**

Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ Շահույթը՝11%, չնախատեսված աշխատանքներ 3%

ԱԱՀ 20% **81203,630**

[illegible]դհանուրը **487221,780**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101285
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար **Ա. Հակոբջանյան**
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ
ք. Սիսիան, Շիրվանզադե 5
Բանկ <Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ –1150008211381335
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն **Վ. Վարդանյան**
(ստորագրություն)